ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունիսի 2016 թվականի N:223-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հառիճ համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 13-ի N45 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի փետրվարի 25-ի նիստի թիվ 17 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի փետրվարի 25-ի նիստի թիվ 15 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Աշոտ Դարբինյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Ամալյա Գրիգորյանի, Կառլեն Աբրահամյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հառիճ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Անդրանիկ Ղարոյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Բակուր Հովհաննիսյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Սամվել Մինասյանի լիազորությունները:

2. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 23-ին Խորհրդի կազմում հաստատված Ռաֆիկ Հակոբյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 23-ը:

3. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հոկտեմբերի 7-ին Խորհրդի կազմում հաստատված Գալուստ Մինասյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 7-ը:

4. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Ռուստամ Մաթիլյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արամ Անտոնյանին, Ամալյա Գրիգորյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հառիճ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Ռոլանդ Նազարեթյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Մարիաննա Նազարեթյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Ֆլորա Կոստանդյանին:

5. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N84 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «20» N223.4 որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Մաթիլյան Ռուստամ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Անտոնյան Արամ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Գրիգորյան Ամալյա	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Նազարեթյան Ռոլանդ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Հակոբյան Ռաֆիկ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Նազարեթյան Մարիաննա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Մինասյան Գալուստ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Կոստանդյան Ֆլորա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է